


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ

ԱՂՆՋԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2017-2021 ԹԹ.

ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ

Ծ Ր Ա Գ Ի Ր

Կազմեց՝ համայնքի ղեկավար  Ա. Գաբրիելյանը
Հաստատվել է՝ համայնքի ավագանու 21.12.2016 թիվ 46-Ն որոշմամբ



2016թ.

գ. Աղնջաձոր

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Համայնքի ղեկավարի ողջույնի խոսք	3
2. Համայնքի իրավիճակի նկարագրություն	4
2.1. Համայնքի ընդհանուր նկարագրություն	4
2.2. Համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակը	4
2.3. Համայնքում իրականացվող ծրագրերը.....	4
2.4. Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրություն և ֆինանսական կանխատեսումները.....	5
2.5. Զարգացման խոչընդոտներ և դժվարություններ	6
2.6. Համայնքի լուծել և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (ՈՒԹՀՍ) վերլուծություն	7
3. Նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում.....	8
3.1. Համայնքի զարգացման տեսլական	8
3.2. Համայնքի զարգացման անմիջական նպատակներ.....	9
4. ՀԶԾ ֆինանսավորում.....	10
5. ՀԶԾ մոնիթորինգ.....	11

2. ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

2.1 Համայնքի ընդհանուր նկարագրությունը

Աղնջաձոր գյուղը գտնվում է պատմական Հայաստանի Սյունաց աշխարհի Վայոց ձոր գավառում, այն համարվում է Վայոց ձորի հյուսիսային դարպասը: Նախկինում գյուղն ունեցել է Ենգիչա, Դրունք, Աղքյանդ, Լեոնանցք անվանումները: Գյուղը վերանվանվել է Աղնջաձոր 1968 թվականին: Սահմանակից է Թառաթումբ, Քարազուխ գյուղերին և Գեղարքունիքի մարզին: Հեռավորությունը Երևանից 140 կմ է, մարզկենտրոնից՝ 23 կմ: Օռլի մակարդակից միջին բարձրությունը՝ 1640 մ է, կլիման՝ չափավոր տաք է և չոր, շոգ ամառներով և ցուրտ ձմեռներով, տեղումների քանակը 350-400 մմ է:

Գյուղում է գտնվում Օրբելիների (Սելիմի) քարավանատունը, որը 1332 թվականի կառույց է, Հայաստանի միջնադարյան քաղաքացիական ճարտարապետության եզակի կառույցներից մեկը: Գյուղից երեք կիլոմետր դեպի հյուսիս՝ Սելիմից հոսող գետակի ձախ կողմի վրա կա մի կիսավեր քարավանատուն (Փոքր քարավանատուն), ենթադրվում է, որ այն կառուցվել է 13-րդ դարում: Աղնջաձորից 4 կմ հյուսիսում է գտնվում Կասյույտ (Սուլեմա) բերդի ավերակները (մ.թ.ա 2-1 հզ, IV-XIV դարեր), որը դասվել է Սյունյաց երկրի նշանավոր և անառիկ բերդերի շարքին: Գյուղը հարուստ է խաչքարերով (IX-XIV դարեր) և կամուրջներով (XIII-XV դարեր, XVIII-XIX դարեր):

Գյուղի մասնագիտական ճյուղն անասնապահությունն է, զբաղվում են խոշոր և մանր եղջերավոր անասունների բուծմամբ: Զբաղվում են նաև պտղաբուծությամբ և մեղվաբուծությամբ:

Համայնքի վարչական տարածքը 3279.54 հա է, այդ թվում գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 3169.45 հա, տնամերձի ֆոնդ՝ 42.89 հա: Միջհամայնքային և ներհամայնքային ճանապարհները հիմնականում ասֆալտապատ են:

Գյուղում գործում է միջնակարգ դպրոց, բուժկետ և գրադարան:


Համայնքի բնակչության թիվը կազմում է 439 մարդ, որոնցից տղամարդիկ կազմում են 53 տոկոսը:

Ստորև ներկայացված են բնակչության սեռատարիքային սանդղակը և բնակչության բնական աճը:

Համայնքի բնակչությունը.

	Տղամարդիկ	Ընդամենը	Մրական	Դեղական
1	0-6 տարեկան	34	17	17
2	7-18 տարեկան	54	29	25
3	19-62 տարեկան	284	156	128
4	63 և բարձր	67	31	36
	Ընդամենը	439	233	206


Սեռատարիքային սանդղակ



Համայնքի բնական աճը.

Տարեթիվ	Ծնունդների թիվ	Մահերի թիվ	Բնական աճ
2013	6	6	0
2014	6	4	2
2015	5	4	1
2016	2	7	-5
Ընդամենը	19	21	-2

Բնական աճ




2.2 Համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակը

Բնակչության սոցիալական կազմը.


Սոցիալական կազմը	Քանակ
Թոշակառու	63
Միակողմանի ծնողազուրկ երեխաներ	1
Միայնակ մոր երեխա	5
Հաշմանդամներ	10
Զինձառայողներ	9
Ընտանիքների (ծխերի) թիվը	129
Ընտանեկան նպաստ ստացող ընտանիքներ	18
Զբաղվածներ	230
այդ թվում՝ գյուղատնտեսական աշխատանքներով	185
Առևտուր, ավտոմեքենաների, կենցաղային արտադրատեսակների և անձնական օգտագործման իրերի նորոգում	1
Տեղական ինքնակառավարում	6
Կրթություն, այդ թվում նախադպրոցական	25
Առողջապահություն	1

Կրթական մակարդակը.

Կրթություն	Քանակ
Տարրական	7
Հիմնական	26
Միջնակարգ	179
Միջին մասնագիտական	53
Բարձրագույն	63



2017 թվականի տարեկան բյուջեի նախագծով համայնքի ընդհանուր տարեկան եկամուտները կազմում է 9 956.4 հազար դրամ, որից սեփական եկամուտներ՝ 2 315.2 հազար դրամ:



Համայնքը հիմնականում զբաղվում է անասնապահությամբ և հողագործությամբ: Առաջված հիմնական արտադրանքը սպառվում է ոչ միայն Վայոց ձորի մարզում, այլև հարակից մարզերում և Երևանում:

Գյուղատնտեսական արտադրանքը տարեկան կտրվածքով կազմում է.

Գյուղատնտեսական արտադրանք	Քաշը (տոննա)
Կար	650
Միս	37
Մեղր	3
Պտուղ	1200

Համայնքն ունի զբոսաշրջության զարգացման համար նպաստավոր պայմաններ, մասնավորապես համայնքով է անցնում միջպետական նշանակության ճանապարհը, որով անցնում է Իրան-Վրաստան բեռնափոխադրումների մի մասը: Գյուղում է գտնվում Օրբելիների (Սելիմի) քարավանատունը, որը 1332 թվականի կառույց է, Հայաստանի միջնադարյան քաղաքացիական ճարտարապետության եզակի կառույցներից մեկը: Գյուղից երեք կիլոմետր դեպի հյուսիս՝ Սելիմից հոսող գետակի ձախ կողմի վրա կա մի կիսավեր քարավանատուն (Փոքր քարավանատուն), ենթադրվում է, որ այն կառուցվել է 13-րդ դարում: Աղնջաձորից 4 կմ հյուսիսում է գտնվում Կապույտ (Սուլեմա) բերդի սմբերակները (մ.թ.ա 2-1 հզ. 4-14դդ), որը դասվել է Սյունյաց երկրի նշանավոր և անառիկ բերդերի շարքին: Գյուղը հարուստ է խաչքարերով (IX-XIV դարեր) և կամուրջներով (XIII-XV դարեր, XVIII-XIX դարեր):

Համայնքում այժմ գործում է մեկ կաթի հավաքման կետ, մեկ լավաշի փուռ, երեք մսնրածախս առևտրի կետեր:

Համայնքում գործում է մեկ միջնակարգ դպրոց, որտեղ հաճախում են թվով 43 աշակերտներ: Չնայած աշակերտների փոքր թվաքանակին դպրոցը տվել է բազմաթիվ բարձրագույն շրջանավարտներ: Համայնքն ունի բուժակ-մանկաբարձական կետ, որը սպասարկում է համայնքի բնակչությանը:

2.3 Համայնքում իրականացվող ծրագրերը

Առաջիկա տարիներին համայնքը պատրաստվում է համագործակցել ՀՀ Կառավարության, միջազգային դոնոր կազմակերպությունների, ինչպես նաև անհատ ներդրողների հետ:

Համայնքը համագործակցել և առաջիկայում շարունակելու է համագործակցել «Ռազմավարական զարգացման գործակալություն» հասարակական կազմակերպության հետ՝ «Անասնապահության զարգացումը Հարավային կովկասում» ծրագրի շրջանակներում՝ նպատակ ունենալով խթանել անասնապահության զարգացումը համայնքում:

Համայնքը համագործակցում է նաև Հայաստանի «Ֆուլեր տնաշինական կենտրոն»-ի և «Գյուղի զարգացման արդի նախաձեռնություն» (ARDI) ծրագրի հետ՝ նպատակ ունենալով համայնքի անապահով և երիտասարդ ընտանիքներին օգնելու և աջակցելու տան վերանորոգման կամ կառուցելու հարցում:

Համայնքն ակտիվ համագործակցում է «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի հետ, որը բազմաթիվ անգամներ օգնություն է ցուցաբերել համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին:

Համայնքն ակտիվ համագործակցում է նաև «Վերջին օրերի սրբեր» կազմակերպության հետ: Նրանց աջակցությամբ մասնակի վերանորոգվել է խմելու ջրազծի ներքին ցանցը և առաջիկայում նախատեսվում է շարունակել համագործակցությունն իրականացնելով նոր ծրագրեր:

Համայնքը պատրաստակամ է համագործակցել անհատ ներդրողների հետ, ովքեր կցանկանան որևէ ներդրում անել համայնքում:


2.4 Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրություն և ֆինանսական կանխատեսումները

Համայնքի եկամուտները գոյանում են համայնքի բյուջե վճարվող հողի հարկից, գույքահարկից, հողի վարձավճարներից և տեղական տուրքերից: Համայնքի բյուջեի մնացած մասը ստացվում է ֆինանսական համահարթեցման նպատակով տրվող

դրույթներից: Համայնքի բյուջեի եկամուտների սեփական եկամուտները փոքր մաս են կազմում, սակայն դրանք 2013-2015թթ. փաստացի տվյալներով աճել են:


Ստորև ներկայացված է համայնքի սեփական եկամուտների փաստացի տվյալները 2013-2015թթ.:

Տարեվեր	Սեփական եկամուտ /հազ. ՀՀ դրամ/
2013	1,872
2014	2,527
2015	2,945



2013-2015թթ.-ի համայնքի փաստացի ստացված ընդհանուր եկամուտները և փաստացի կատարված ընդհանուր ծախսերը ներկայացված են ստորև բերվող աղյուսակում.

Տարեվեր	Տարբարգրի ազատ մնացորդ /հազ. ՀՀ դրամ/	Ընդհանուր եկամուտներ /հազ. ՀՀ դրամ/	Ընդհանուր ծախսեր /հազ. ՀՀ դրամ/
2013	2,425	8,648	9,393
2014	1,679	9,637	9,469
2015	1,887	11,509	11,931



2016 թվականի համայնքի սեփական եկամուտները նախատեսվել են 1 889.0 հազար դրամ, 2017 թվականի բյուջեի նախագծով նախատեսվել է 2 315.2 հազար դրամ:

2016 թվականին նախատեսված ընդհանուր եկամուտների չափը կազմում է 11025.9 հազար դրամ, 01.12.2016թ. դրությամբ կատարվել է 10340.0 հազար դրամ:

Առաջիկա տարիներին ակնկալվում է պետության կողմից տրամադրվող ֆինանսական համահարթեցման նպատակով տրվող դոտացիաների չափի ավելացում, ինչպես նաև նախատեսվում է ավելացնել համայնքի բյուջե մտնող սեփական եկամուտների չափաբաժին՝ ի հաշիվ հարկերի ավելի արդյունավետ հավաքագրման: Առաջիկա տարիներին նախատեսված համայնքային ծրագրերի իրականացման գործում նախատեսվում է ներգրավել պետական և դոնոր կազմակերպությունների աջակցությունը:

2.5 Զարգացման խոչընդոտներ և դժվարություններ

Աղնջաձոր համայնքի բնակչությունը հիմնականում զբաղվում է անասնապահությամբ և հողագործությամբ, ինչը ոչ բոլոր դեպքերում է ապահովում բավարար եկամուտներ ապրուստի միջոցները հոգալու համար, նպաստելով համայնքի բնակչության միգրացիայի աճին, հետևաբար համայնքում առաջնային անհրաժեշտություն է աշխատատեղերի ստեղծումը:

Համայնքում չկան երիտասարդական և այլ ժամանացային կենտրոններ, որտեղ երիտասարդները հնարավորություն կունենան կազմակերպելու միջոցառումներ, ինտելեկտուալ և սպորտային խաղեր, որոնց միջոցով էլ կբարձրանա գյուղի երիտասարդի կյանքի որակը: Համայնքի մշակույթի տունն ապահովված չէ համապատասխան

ապրավորումներով, ինչը խոչընդոտում է միջոցառումների կազմակերպմանը մշակույթի տանը, այս ամենը նպաստում են երիտասարդների կողմից համայնքը լքելուն:

Համայնքում էլեկտրական հոսանքը գտնվում է վատթար վիճակում, որը խոչընդոտում է համայնքում արդեն իսկ գործող կաթի հավաքման կետի և լավաշի փոփրնականոն սաշխատանքներին:

Չետևաբար ելնելով վերոնշյալ խնդիրներից համայնքն առաջիկա տարիներին նախատեսում է իրականացնել հետևյալ ծրագրերը

- ☛ նոր սաշխատեղերի ստեղծում,
- ☛ փողոցների ամբողջական լուսավորություն,
- ☛ որոգման և խմելու ջրի ցանցերի բարելավում,
- ☛ գյուսաշրջության զարգացում,
- ☛ համայնքում երիտասարդական կենտրոնի ստեղծում,
- ☛ Համայնքի մաքրության և բարեկարգման խնդիրների կանոնակարգում:

Վերոնշյալ ծրագրերը նախատեսվում է իրականացնել օգտագործելով համայնքի ուժեղ կողմերը, համայնքային բյուջեի միջոցները, ինչպես նաև ՀՀ Կառավարության և այլ միջազգային կառույցների աջակցությունը:

2.6 Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (ՈւԹՀՍ) վերլուծություն

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
<ol style="list-style-type: none"> 1. Զբոսաշրջության զարգացման համար նախատավոր պայմաններ և ռեսուրսներ 2. Բարձրագույն կրթություն ունեցող բնակիչներ 3. Համայնքում գործող փոքր բիզնեսներ 	<ol style="list-style-type: none"> 1. Համայնքի բյուջեի սեփական եկամուտների փոքր չափաբաժին 2. Զբաղվածության խնդիր 3. Սոցիալապես անապահով ընտանիքների մեծ թիվ
Հնարավորություններ	Սպառնալիքներ
<ol style="list-style-type: none"> 1. Համայնք այցելող զբոսաշրջիկների աճի տեմպեր 2. Ֆին. համ. դոտացիաների աճ 3. Պետական աջակցությամբ իրականացվող ծրագրերի թվի աճ 4. ՏԻՄ ոլորտում միջազգային կազմակերպությունների կողմից իրականացվող ծրագրերի շարունակական բնույթ և աճ 	<ol style="list-style-type: none"> 1. Պետական բյուջեի միջոցների սղություն 2. Համայնքում բնակչության միգրացիայի աճ 3. Պատերազմական իրավիճակ

Նախնիք Ը. Լապտև

3. ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ

3.1 Համայնքի զարգացման տեսլական

Համայնքի տեսլականն է ունենալ զարգացած գյուղատնտեսությամբ, գյուղատնտեսությամբ, փոքր բիզնեսներով համայնք, որտեղ բնակիչները կունենան գրողականություն, երիտասարդները կվերադառնան և կհիմնվեն համայնքում: Դրան է ուղղված համայնքի կողմից կազմված առաջնահերթ ծրագրերի, նպատակների ձևակերպումն ըստ առաջնահերթ բնագավառների:

3.2 Համայնքի զարգացման ծրագրերի, նպատակների առաջադրում և կոնկրետ խնդիրների ձևակերպում

Ստորև ներկայացվում է համայնքի զարգացման ծրագրերի, նպատակների առաջադրում և կոնկրետ խնդիրների ձևակերպում՝ ըստ առանձին բնագավառների:

ՄՐԱԳԻՐ N 1

Ոռոգման ջրատարի կառուցում

Ծրագրի նկարագրությունն ու հիմնավորումը

Ոռոգման ջրատարն ունի հողային հուն, հետևաբար կան ջրի մեծ կորուստներ: մոտավորապես դա կազմում է 50-60%: Այդ պատճառով ոռոգման ամենաակտիվ սեզոնին առաջանում են լուրջ խնդիրներ հողակտորները ջրով ապահովելու հարցում: Ջրատարի կառուցումը հնարավորություն կտա նոր տնակներ հիմնելու և 20 հա խնձորենիներին փրկելու չորացումից:

Ծրագրի իրագործման համար անհրաժեշտ է լուծել մի շարք կարևոր խնդիրներ՝

- հիմնախնդիրը բարձրացնել կառավարության առջև ծրագիրը ֆինանսավորելու համար
- ապահովել համայնքի ներդրումը
- կազմել ծրագիր նախագծա-նախահաշվային փաստաթղթերը
- 2017թ իրականացնել շինարարական աշխատանքներ: Հողային աշխատանքներ 47 կմ երկարությամբ, 200-250մմ. տրամաչափի խողովակաշարի կառուցում և փականային համակարգի տեղադրում:

Ծրագրի ֆինանսական միջոցների գնահատումը

Ծրագրի նախահաշվային արժեքը կազմում է 15 մլն դրամ:

ՄՐԱԳԻՐ N 2

Խմելու ջրի ներքին ցանցի կառուցում

Օրագրի նկարագրությունն ու հիմնավորումը

Խմելու ջրի ներքին ցանցը կառուցվել է 1970թ.: Այսօր վերանորոգվել է նրա մեկ- երկու մասացաց մասը գտնվում է վթարային վիճակում, որը հնարավորություն է տալիս բնակչությանը ապահովել խմելու ջրով: Կորուստները կազմում են 40-50%:

Օրագրի իրագործման համար անհրաժեշտ է լուծել մի շարք կարևոր

խնդիրներ՝

- հիմնախնդիրը բարձրացնել կառավարության առջև ծրագիրը ֆինանսավորելու համար
- ապահովել համայնքի ներդրումը
- կազմել ծրագիր նախագծա-նախահաշվային փաստաթղթերը

2018թ իրականացնել շինարարական աշխատանքներ՝ խողովակների ձեռք բերում D – 50 մմ. 2.0 կմ, հողային աշխատանքներ, խողովակաշարի կառուցում, ջրահավաք կապտաժային համակարգի կառուցում:

Օրագրի ֆինանսական միջոցների գնահատումը

Օրագրի նախահաշվային արժեքը կազմում է 11.680 մլն դրամ:

ՄՐԱԳԻՐ N 3

Ռոտզման պոմպակայանի կառուցում

Օրագրի նկարագրությունն ու հիմնավորումը

Գյուղի «< Ներ >> կոչվող տարածքը (20հա) ինքնահոս ռոտզման ջրով ապահովելու հնարավորություն չլինելու պատճառով խնդիր է առաջացել այն ռոտզելի դարձնել մեխանիկական եղանակով: Նշենք նաև, որ տարածքը նպատակահարմար է ծիրանի, դեղձի, խաղողի այգիների հիմնադրման համար:

Օրագրի իրագործման համար անհրաժեշտ է լուծել մի շարք կարևոր

խնդիրներ՝

- հիմնախնդիրը բարձրացնել կառավարության առջև ծրագիրը ֆինանսավորելու համար
- ապահովել համայնքի ներդրումը
- կազմել ծրագիր նախագծա-նախահաշվային փաստաթղթերը
- Պոմպակայանի տեղադրում (150մմ) տրամաչափի խողովակաշարի կառուցում՝ 500 գծմ. փականային համակարգի տեղադրում
- 2019թ. իրականացնել շինարարական աշխատանքներ:

Օրագրի ֆինանսական միջոցների գնահատումը

Օրագրի նախահաշվային արժեքը կազմում է 16.760 մլն դրամ:

ԾՐԱԳԻՐ N 4

Գյուղատնտեսության վարչական շենքի նորոգում

Մրագրի նկարագրությունն ու հիմնավորումը

Համայնքի վարչական շենքը գտնվում է գյուղի կենտրոնական մասում, որը իր մեջ ներառում է նաև գրադարանն և բուժկետը: Շենքը հին կառույց է և գտնվում է քայքայման եզրին: Գյուղատնտեսության ֆինանսական միջոցների անբավարարության պատճառով նկարագրություններ չկան շենքի վրանորոգման համար:

Մրագրի իրագործման համար անհրաժեշտ է լուծել մի շարք կարևոր

խնդիրներ՝

- հիմնախնդիրը բարձրացնել կառավարության առջև ծրագիրը ֆինանսավորելու համար
- սպասելու համայնքի ներդրումը
- կազմել ծրագիր նախագծա-նախահաշվային փաստաթղթերը
- 2020թ. իրականացնել շինարարական աշխատանքներ՝ տանիքի վերակառուցում ցինկապատ շերտաթիթեղով 150քմ., հատակի վերանորոգում 100քմ., ընդհանուր շենքի սպիտակեցում 315քմ., դռների և 25քմ. պատուհանների մասնակի նորոգում:

Մրագրի ֆինանսական միջոցների գնահատումը

Մրագրի նախահաշվային արժեքը կազմում է 6.754 մլն դրամ:

ԾՐԱԳԻՐ N 5

Գյուղամիջյան ճանապարհի բարեկարգում

Մրագրի նկարագրությունն ու հիմնավորումը

Գյուղամիջյան առանձին փողոցներ, գտնվելով անմխիթար վիճակում բարդություններ են առաջացնում երթևեկության համար, որոշ հատվածներ դառնում են անանցանելի. ամռան ամիսներին խիստ վատանում է սանիտարահիգենիկ վիճակը:

Մրագրի իրագործման համար անհրաժեշտ է լուծել մի շարք կարևոր

խնդիրներ՝

- հիմնախնդիրը բարձրացնել կառավարության առջև ծրագիրը ֆինանսավորելու համար
- սպասելու համայնքի ներդրումը
- կազմել ծրագիր նախագծա-նախահաշվային փաստաթղթերը
- 2021թ. իրականացնել շինարարական աշխատանքներ:

Մրագրի ֆինանսական միջոցների գնահատումը

Շինարարական աշխատանքներ

Փողոցների հարթեցում, խճապատում 7200քմ, 250մ ջրահեռացման խողովակների տեղադրում, 1000քմ ասֆալտապատում


Մրագրի նախնական հաշվային արժեքը կազմում է 62 մլն դրամ:

4. ՀԶԾ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ

Համայնքի զարգացման ծրագրում նախատեսված ծրագրերը կիրականացվեն օգտագործելով համայնքի սեփական եկամուտները, ՀՀ Կառավարության պետական աջակցությունը, միջազգային և դոնոր կազմակերպությունների, ինչպես նաև անհատ ներդրողների աջակցությամբ: Նշված ներդրումները և աջակցությունը ստանալու համար այժմ տարվում են աշխատանքներ:

ՀԶԾ-ում նշված մի քանի ծրագրերը նախատեսվում է իրականացնել ՀՀ Կառավարության և անհատ ներդրողների աջակցությամբ: Ծրագրերի մի մասը կիրականացվեն համայնքի սեփական եկամուտների հաշվին:

Ստորև ներկայացվում է 2017 թվականի բյուջեի նախագծով նախատեսված համայնքի սեփական եկամուտների չափաբաժինն ընդհանուր եկամուտների մեջ:



Չնայած համայնքի սեփական եկամուտների փոքր չափաբաժնին, նախատեսվում է ՀԶԾ-ում ներառված ծրագրերի իրականացման գործում ներդրումներ կատարել համայնքի սեփական եկամուտներից:

5. ՀԶԾ ՄՈՆԻԹՈՐԻՆԳ

Համայնքի ՀԶԾ ծրագրով ներառված զարգացման ծրագրերը և աշխատանքները կարևոր են համայնքի զարգացման գործում, որոնք միտված են գլխավորապես համայնքի բնակչության կենսամակարդակի և ապրուստի պայմանների բարելավմանն. այդ իսկ պատճառով ՀԶԾ-ի մոնիթորինգը շատ կարևոր է:

Նախատեսվում է մոնիթորինգ իրականացնել վերը նշված բոլոր ծրագրերի իրականացման ժամանակ, ինչպես նաև իրականացնել մոնիթորինգ յուրաքանչյուր ծրագրի ավարտից հետո հասկանալու ստացված օգուտները և հետագայում նմանատիպ ծրագրերի իրականացման ընթացքում կատարվելիք բարեփոխումները:

Մասնավորապես մոնիթորինգի կենթարկվեն հետևյալ ցուցանիշները.

- ⌚ յուրաքանչյուր ծրագրի բյուջեն, դրա ֆինանսավորման աղբյուրները,
- ⌚ ծրագրի օգուտները և արդյունքները,
- ⌚ ներգրավված բնակիչների թիվը:

Կատարված մոնիթորինգի արդյունքները կամփոփվեն և կներկայացվեն համայնքի բնակչության ուշադրությանը տարին մեկ անգամ՝ հրավիրելով համայնքի ընդհանուր ժողով: Այն կօգնի ապահովել ՏԻՄ աշխատանքների թափանցիկությունն, ինչպես նաև յուրօրինակ հարթակ կհանդիսանա լսելու համայնքի բնակիչների առաջարկությունները և կարծիքները: